

միօրեայ ուրախութեան պահուն անձնատուր եղաւ հին ախտին. «գիւնիկն կկն զակամբ նորա, արբեցաւ» ու սկսաւ դանդաշել. «Վայ ինձ Արշակայ, կ'ըսէր. այսպէս եւ այս, եւ յայսմ չափու եւ այս անցք անցին ընդ իս»: Եւ արբեցութեան այս գառանցանաց մէջ ձեռքի դանակը խրեց սիրտը, եւ վարագուրեց սեւ օրերը (նոյն, 208): — Ս. Յուսկան անառակ որդիքը դիակնացած գտնուեցան այն պահուն՝ ուր էին «բագու՛մ հատեալ յարբշտութիւն», եւ իրենց այդ խորհրդաւոր մահը հրեշտակի վերագրուեցաւ (նոյն, 48): — Հարկ կայ դիտել տալու՝ թէ այդ ամէն խնճոյից մէջ կ'արբենան առ հասարակ բոլոր բազմականք, եւ ոչ թէ ոմանք միայն. որով յայտնի կը տեսնենք արբեցութեան տեսակ մը ստիպումն ամենուն համար: Իսկ յարակից ոճիրներն այնպէս կապուած են գինեբրուաց հետ, որ հաւասարապէս հոն կը կատարուին առանց արբեցութեան օժանդակութեան ալ: Զոր օրինակ Պապ սպանեց զմեծն Ներսէս իւր կոչնոց պահուն, մահը ծածկելով անոր ժուժկալ բաժակին մէջ (նոյն, 216): Իրեն ալ արեւը շիջաւ Տերենտի ընթրեաց մէջ, երբ հազիւ տակաւին ուրախութեան «առաջին» նուագը բռնած էր, եւ միտքը դեռ